# ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

***Ուսումնական տարվա սկիզբն ազդարարող գիտելիքի և դպրության օրը տոն է հատկապես նրանց համար, ովքեր առաջին անգամ պիտի ոտք դնեն դասարան կամ լսարան: Այս օրերին ԱրՊՀ ընդունված առաջին կուրսեցիների տոնական տրամադրությունն ակնհայտ է, բայց կան հարցեր, որոնց շուրջ, որպես կանոն, մտորում է յուրաքանչյուր 1-ին կուրսեցի ուսանողական կյանքի սկզբնական շրջանում. արդյո՞ք ճիշտ մասնագիտական ընտրություն է կատարել, կարդարանա՞ն ակնկալիքները, կհաջողվի՞ արդարացնել հույսերը... և այսպես շարունակ: Այս հարցերի շուրջ էլ զուցեցինք առաջին կուրսեցիների հետ:***



*Քրիստինան ապագա կենսաբան է և իրեն տեսնում է բժշկության մեջ: Ասում է` մասնագիտության ընտրության հարցում չի դժվարացել, կողմնորոշվել է դեռևս պատանեկության տարիներին: Անելիքների մասին այս պահին հստակ չի խոսում, միայն թե հաստատակամ է` լավ մասնագետ է դառնալու, որովհետև խոստացել է բոլորին և ինքն իրեն` առաջին հերթին: «Պարտավորություններ ունեմ ոչ միայն ինքս իմ և ծնողներիս, այլև երկրիս առջև: Նպատակ ունեմ լինել լավագույնը իմ ոլորտում, գիտելիքներս ծառայեցնել երկրիս զարգացմանը»,- ասում է Քրիստինան:*

***Ավանեսյան Քրիստինա***
***Կենսաբանություն, 1-ին կուրս***



*Ի տարբերություն Քրիստինայի` լրագրության բաժնի ուսանողուհի Համեստ Մկրտչյանը վերջին պահին է կողմնորոշվել մասնագիտության հարցում: Ասում է` իր ընտրությունը չի խրախուսվել ընտանիքում, սակայն ինքը եկել է «երազանքի ետևից»: Համեստը մեծ սպասելիքներ ունի և համոզված է, որ աշխատասիրության ու կամքի շնորհիվ կարող է դառնալ ոլորտի լավագույններից: «Արցախի ներկայիս կարգավիճակը պահանջում է սթափ լինել նաև տեղեկատվական դաշտում: Լրագրողներիս վրա է դրված մեր երկիրը մեդիադաշտում արժանապատվորեն ներկայացնելու պարտականությունը, իսկ ահա մասնագիտական կրթությունը կուղղորդի մեզ մեր գործն անել գրագետ և հմուտ»,- վստահ է Համեստը:*

***Համեստ Մկրտչյան***
***Լրագրություն, 1-ին կուրս***

*Տեղեկատվական տեխնոլոգիաների դարում քիչ է միայն ծանոթ լինել ոլորտին. այս գիտակցումով է մասնագիտություն ընտրել Վահեն:*

*«Այս մասնագիտությունն ընտրել եմ այն համոզմունքով, որ համալսարանական կրթությունը հնարավորություն կտա առավելագույնս յուրացնելու ծրագրավորման գաղտնիքները: Նպատակ ունեմ դասընթացներ անցնել նաև արտասահմանում, սակայն միայն դրսի փորձը յուրացնելու և տեղայնացնելու համար»,- նպատակների մասին մանրամասնում է Վահեն:*



***Վահե Դանիելյան***
***Տեղեկատվական տեխնոլոգ., 1-ին կուրս***



Բանասիրության ֆակուլտետում կատակով ասում են, թե ֆակուլտետում «տղա ուսանողներին մանրադիտակով ենք փնտրում»: Այս տարի ֆակուլտետի ուսանողության շարքերը համալրել է չորս տղա: Վրեժ Հայրապետյանը նախատեսել էր կրթություն ստանալ իրավագիտության բաժնում, սակայն, ինչպես ինքն է խոստովանում, միայն իր ծուլության պատճառով չի ընդունվել այդ բաժին. «Ես բանասիրական ֆակուլտետում եմ և բնավ էլ չեմափսոսում: Ինչու՞: Որովհետև լինել դասախոսների և կուրսի քանյոթ աղջիկների ուշադրության կենտրոնում, միայն երազել կարելի է (բազմանշանակ ժպտում է)»: Իսկ հասակակիցներին խորհուրդ է տալիս «ժամանակն անիմաստ չվատնել, որովհետև միակ բանը, որ հնարավոր չէ վերադարձնել, ժամանակն է»:

***Վրեժ Հայրապետյան***
***Հայոց լեզու և գրակ., 1-ին կուրս***



*Պատմության բաժնի ուսանողուհի Լենան աշակերտական տարիներին պատմությունից բազմաթիվ մրցույթների և օլիմպիադաների է մասնակցել, միշտ մրցանակային տեղեր զբաղեցրել, պատիվ է ունեցել պարգևատրվելու նաև նախագահի կողմից: «Ասել, թե մենք բոլորս հաջողել ենք ընդունվել համալսարան, կնշանակի պատվով ենք հաղթահարել մեր կյանքի կարևորագույն փուլերից մեկը: Տպավորություն է, թե դժվարությունները ետևում են, առջևում անհոգ ուսանողական կյանքն է, այնինչ հաղթահարված է միայն սկիզբը, շարունակությունն առջևում է: Համոզված եմ, որ մենք արդարացնելու ենք մեր և բոլորի հույսերը`յուրաքանչյուրս մեր ոլորտում դառնալով անգերազանցելի».- ասում է Լենան ուսանողական կյանքի և համալսարանական կրթության մասին:*

***Լենա Մուսայելյան***
***Պատմություն, 1-ին կուրս***




«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ

*Հիմնադիր`*
*«ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ*

Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր` Զարինե Սառաջյան

Մեր հասցեն` Մ.Գոշի 5:
Հեռ.` (047) 94 04 91

Տպաքանակ` 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:

Այցելի՛ր asu.am կայք:

www.asu.am



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

*№ 06 (211)*
*սեպտեմբեր, 2018*




***1991 թվականի սեպտեմբերի 2-ը չափազանց կարեւոր եւ հիշարժան օր է մեր ժողովրդի կյանքում, քանի որ ազատ եւ անկախ հանրապետության հռչակումը հիմնովին ու արմատապես փոխեց մեր պատմության ընթացքը: Այլեւս մեր ճակատագիրը մեր ձեռքերում էր, մենք էինք մեր ապագայի տերն ու կերտողը: Մեր սերունդն ստանձնեց իսկայական պատասխանատվություն` ինչպես մեր նախնիների հիշատակի առջեւ, այնպես էլ հետագա սերունդների, մեր հայրենիքի եւ համայն հայության ապագայի համար:***

***Այդ պատասխանատվության զգացումն է, որ այսօր պարտավորեցնում է մեզ լինել ավելի ուժեղ եւ ամուր, միասնական ու համախմբված, ամեն ինչ անել` հանուն մեր հայրենիքի զորացման ու բարգավաճման, հանուն համազգային նպատակների իրականացման: Դա են պահանջում մեր հերոս տղաների թափած արյունը եւ այն թանկ գինը, որ վճարել է հայ ժողովուրդն իր ազատության ու անկախության համար:***

***ԱՀ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ***
***Սեպտեմբերի 2, 2018 թ.***

# ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԴԱՍ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ

***Մայր բուհում նոր ուսումնական տարին մեկնարկեց անկախության դասով, որը վարում էր ԱՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը:***



Նախքան միջոցառման մեկնարկը` ներկաները ծաղիկներ են խոնարհել ԱրՊՀ զոհված ուսանող - ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Արցախի Հանրապետության հռչակման և Գիտելիքի ու դպրության օրվան նվիրված անկախության դասին ներկա էին ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱրՊՀ ռեկտորի պաշտոնակատար Մանուշ Մինասյանը, դասախոսներ, ուսանողներ:

Հանդես գալով բացման խոսքով` Մանուշ Մինասյանը ողջունել է առաջին կուրսեցիներին, շնորհավորել բուհ ընդունվելու և նոր ուսումնական տարվա կապակցությամբ` մաղթելով գիտելիքառատ տարի:

«Նոր ուսումնականը նոր իղձերի, նոր սպասելիքների, նոր նախաձեռնությունների սկիզբ է ենթադրում և այս ակնկալիքով է ցանկացած ծնող իր զավակին բուհ կամ դպրոց ճանապարհում, այս ակնկալիքով է ցանկացած մանկավարժ և ուսանող մտնում լսարան: Ցանկանում եմ, որ այս ակնկալիքները իրողություն դառնան»,- բարեմաղթել է ռեկտորը:

Խորհրդարանի ղեկավարը, շնորհավորելով ուսանողությանը, կոչ արեց առավելագույնս օգտագործել առկա հնարավորությունները, ձեռք բերել կրթական և մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակ:

«Ձեզ համար նոր, պատասխանատու փուլ է սկսվում, ինչը ենթադրում է նոր կարգավիճակ` ուսանող: Սա նշանակում է, որ դուք արդեն հաջողել եք, հաջողել եք լինել Արցախի պետական համալսարանի ուսանող»,- նշել է Ա. Ղուլյանը:

Ուսանողական և դասախոսական կազմին շնորհավորելով նոր ուսումնականի մեկնարկի առթիվ` ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը մաղթեց խաղաղ և ակտիվ նախաձեռնություններով ուսումնական տարի:

«Հիշե՛ք, որ միակ բանը, որ չեք կարողանալու վերադարձնել, ժամանակն է: Սովորե՛ք ճիշտ օգտագործել ժամանակը: Նաև հիշե՛ք` կարևոր է ոչ թե այն, թե ինչ մասնագետ եք դառնալու, այլ` ինչպիսի»,- դիմելով ուսանողությանը` նշել է նախարարը:

# ԱրՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Է ԸՆՏՐՎԵԼ ԱՀ ՊԵՏՆԱԽԱՐԱՐ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

***Օգոստոսի 21-ին գումարված ԱրՊՀ խորհրդի անդրանիկ նիստում ընտրվել են խորհրդի նախագահ և քարտուղար, հաստատվել են ընթացիկ աշխատակարգեր***:



ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, հղում անելով բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքին, նիստի սկզբում ներկայացրեց ԱրՊՀ խորհրդի նոր կազմը՝ նշելով, որ ընթացիկ տարվա հունիսի 17-ին լրացել է ԱրՊՀ խորհրդի գործունեության ժամկետը և ԱՀ Կառավարության որոշմամբ հաստատվել է նոր խորհուրդը, որի անդամները ներկայացնում են հիմնադիր կազմը, ԱՀ ԿԳՍ նախարարությունը, ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ՈՒԽ-ն:

ԱրՊՀ նորակազմ խորհրդի անդամներին ներկայացնելուց հետո լիազոր մարմնի ղեկավարը շնորհակալություն է հայտնել նախորդ խորհրդի անդամներին և նիստին ներկա խորհրդի նախկին նախագահ Աշոտ Ղուլյանին՝ նպատակային և արդյունավետ աշխատանքի համար:

Ա. Ղուլյանը, ով համալսարանի խորհուրդը ղեկավարել է 2016-2018 թթ., այդ տարիների մեծագույն ձեռքբերումը համարում է այն, որ հաջողել են մտածողություն փոխել առ երկրի մայր բուհ: «Համալսարանն իր ուրույն ձեռագիրն է թողել բարձրագույն կրթական համակարգում, ուստի մեր անելիքներն ուղղված են եղել նրան, որ համալսարանը, ի թիվս այլ գործառույթների, նաև երկրի այցեքարտը լինի»,- ասել է Ա. Ղուլյանը՝ ավելացնելով, որ ընդհանուր առմամբ գոհ է խորհրդի 5-ամյա գործունեության արդյունքներից:

Նիստի օրակարգային առաջին հարցը ԱրՊՀ խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրությունն էր: Հաշվի առնելով անդամների առաջարկները՝ քվեարկության արդյունքում ԱրՊՀ խորհրդի նախագահի պաշտոնում ընտրվեց ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, խորհրդի քարտուղարի պաշտոնում՝ բանասիրական ֆակուլտետի դեկան Լուսինե Մարգարյանը: Նորընտիր նախագահը շնորհակալություն հայտնեց վստահության համար՝ նշելով, որ իր համար պատիվ է ղեկավարել մի բուհի խորհուրդ, որի շրջանավարտն է նաև ինքը. «Հուսով եմ և համոզված, որ համատեղ աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել համալսարանի հետագա զարգացումն ու աշխատանքների պատշաճ իրականացումը»:

Գ. Մարտիրոսյանի նախագահությամբ խորհուրդը հաստատեց նաև օրակարգային երկրորդ և երրորդ հարցերը՝ ԱրՊՀ խորհրդի աշխատակարգն ու ԱրՊՀ ռեկտորի ընտրության ընթացակարգը:

«Համաձայն համալսարանի կանոնադրության և ռեկտորի ընտրության ընթացակարգի՝ ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով, ուստի ԱրՊՀ - ն աշխատանքային երկու օրվա ընթացքում կապահովի համապատասխան հայտարարության հրապարակումը, և 30-րդ օրը կգումարվի խորհրդի նիստ՝ ԱրՊՀ ռեկտորի ընտրության օրակարգային հարցով»,- նշել է Գ. Մարտիրոսյանը:

Նիստի ավարտին, ԱրՊՀ խորհրդի նախագահի առաջարկով, ռեկտոր Մ. Մինասյանը հակիրճ տեղեկություններ է տրամադրել համալսարանի հավատարմագրման և գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման գործընթացների վերաբերյալ:

Եզրափակելով նիստը՝ նախարար Ն. Աղաբալյանը հույս է հայտնել, որ նոր խորհուրդը շարունակելու է ապահովել շարունակական աճին միտված աշխատանքները:

# ԱրՊՀ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է 3 ՀԱՅՏ



***Սեպտեմբերի 21-ին ավարտվել է ռեկտորի թափուր տեղի համար մրցույթում հայտեր ներկայացնելու վերջնաժամկետը: Արցախի պետական համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել՝***

***1. Արտեմ Նիկոլայի Աբրահամյանը.***

*Գիտական աստիճանը՝ քիմիական գիտությունների թեկնածու*

*Գիտական կոչումը՝ ԱրՊՀ պրոֆեսոր*

*Պաշտոնը՝ ԱրՊՀ քիմիայի ամբիոնի վարիչ*

*Առաջադրման ձևը՝ ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի կողմից*

***2. Կամո Իվանի Աթայանը***

*Գիտական աստիճանը՝ մանկավարժական գիտությունների դոկտոր*

*Գիտական կոչումը՝ ՀՀ Հայ-ռուսական համալսարանի ընդհանուր ֆիզիկայի և քվանտային նանոկառուցվածքների ամբիոնի պրոֆեսոր*

*Առաջադրման ձևը՝ ինքնառաջադրում*

***3. Արմեն Յուրիկի Սարգսյանը***

*Գիտական աստիճանը՝ բանասիրական գիտությունների թեկնածու*

*Գիտական կոչումը՝ ՀՀ ԲՈԿ դոցենտ*

*Պաշտոնը՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարար*

*Առաջադրման ձևը՝ ինքնառաջադրում*

***Տեղեկությունը՝ ըստ ԱրՊՀ խորհրդի նախագահ Գ.Ի. Մարտիրոսյանի:***



# ՊՈԵԶԻԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ, ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

***Հարցազրույց բանաստեղծ, բ.գ.դ., պրոֆեսոր, ԱրՊՀ դասախոս Սոկրատ Խանյանի հետ***



***-Պարոն Խանյան, պատմեք, խնդրում եմ, Ձեր ստեղծագործական առաջին քայլերի մասին:***

- Բանաստեղծություն գրել սկսել եմ 3-րդ դասարանից, և դա ինձ մոտ ստացվել է: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հիմնականում բանաստեղծությունները նվիրված էին Ստալինին, բայց ես ելք եմ գտել՝ մեր ընտանիքի կյանքը դարձնելով բանաստեղծության առանցք: Հետո այդ բանաստեղծությունը տպագրվել է 1939թ.-ին «Սովետական Ղարաբաղ» թերթում: 1950թ.-ին «Կոմունիստ» (հայերեն) հանրապետական թերթում տպագրվեց իմ բանաստեղծությունը, որը համարում եմ իմ գրական մուտքը: Այդ ժամանակ ես սովորում էի բանասիրական ֆակուլտետի 1-ին կուրսում: Այն լայն արձագանք է գտել, որովհետև նվիրված էր հայրենական պատերազմում զոհված իմ ավագ եղբորը:

***-Ե՞րբ է տպագրվել Ձեր առաջին գիրքը, և ի՞նչ արձագանքներ ունեցավ:***

-Իմ առաջին գիրքը տպագրվել է 1958թ.-ին՝ «Կարկաչ» խորագրով: Այս գիրքը ես համեմատել եմ առվի կարկաչի հետ: Գրքում հենց այն գաղափարն է, որ պոեզիան ծնվում, արարվում է մարդկանց կարոտը սփոփելու, մարդկային ցավը, վիշտը փարատելու համար: Այն լուրջ արձագանք է գտել, և գրքի շուրջ իր դրական խոսքն է ասել Ն. Զարյանը, այնուհետև իմ երկրորդ գրքի մասին՝ հայտնի բանաստեղծ Մկրտիչ Կորյունը, երրորդ գիրքս գրախոսել է հայտնի արձակագիր Մկրտիչ Արմենը: Եվ այսօր ես բանաստեղծական քսան գրքի հեղինակ եմ:

***-Ի՞նչ է պոեզիան՝ ըստ բանաստեղծ Սոկրատ Խանյանի:***

-Պոեզիայում ձգտում եմ նախ շարունակել մեր հայկական հազարամյա պոեզիայի ավանդույթները: Պոեզիան կյանքի փիլիսոփայությունն է, և դա նշանակում է, որ պոեզիան ժողովրդի, ազգային ճակատագրի արձագանքը պետք է լինի, և ուզած- չուզած պոեզիան գնում է դեպի կյանք, և կյանքից պոեզիա, այնպես որ՝ պետք է սերտ կապի մեջ լինես ժողովրդի ճակատագրի, կյանքի հետ՝ այդտեղ հայրենիքի պաշտպանությունն է, ընտանիքների գեղեցկությունն է, սիրո վեհությունն է, այդտեղ նոր սերնդի հայրենասիրական զգացողություններն ու գեղեցիկ ապրելու միտումն է: Պոեզիան չի սիրում ճակատային խոսքը և ինչպես Բելինսկին է ասել.«Գրականությունը պատկերավոր մտածողություն է, պետք է ժողովրդի դեմքը արտացոլես միայն ու միայն պատկերավոր մտածողությամբ»:

***-Ինչպե՞ս է Ձեր մեջ ծնունդ առնում բանաստեղծությունը:***

-Բանաստեղծը պետք է սովորած լինի կյանքին, կյանքը ինքը թելադրում է: Ոչ մի խելքը գլխին բանաստեղծ չի ասում՝ այսօր պիտի մի բանաստեղծություն գրեմ, կյանքի երևույթների ազդեցությամբ առաջանում է մտահղացում, և եթե կա մտահղացում, անպայմանորեն ծնվելու է բանաստեղծությունը: Գրում ես, հետո՝ մշակում և այդպես ստացվում է իսկական պոեզիա: Օրինակ՝ վերջերս գնացել եմ մեր գյուղ՝ Հադրութի շրջանի Ակնաղբյուր, տեսել եմ մեր բակի այն մեծ թթենին, որից մենք մանուկ ժամանակ թութ էինք թափում, բարձրանում էինք ճյուղերի վրա նստում և այդ հիշողությունը ինձ ստիպեց գրելու 8 տողանոց բանաստեղծություն, որը իմ սրտի թելադրանքն է.

«Մեր հին բակի ծեր թթենի
Եկել եմ ես ծերացած,
Թե կարող ես քո ճյուղերից
Մանկությունս նետիր ցած,
Գնամ նորից մուշ-մուշ քնեմ,
Պապիս բրդյա քուրքի տակ,
Ծերությունս գամ վայելեմ
Քո ծերության շուքի տակ»:

***-Ձեր բանաստեղծություններում ի՞նչ դեր է խաղում կենսագրական տարրը:***

-Յուրաքանչյուր բանաստեղծ ընդունում է, որ կենսագրական տարրն ավելի ջերմ է դարձնում, ավելի անկեղծ ու անմիջական: Օրինակ, երբ 18-րդ դարի վերջին գերմանական հզոր բանաստեղծները բանավիճել են՝ ասել են, որ բանաստեղծը չպետք է կենսագրական տարրերըմտցնի պոեզիայի մեջ, Գյոթեն ասել է. «Սխալվում եք, ես իմ սիրային շարքի մեջ անպայմանորեն իմ կենսագրությունը նկատի եմ առնում, ավելի անմիջական է դառնում, բայց դա իմ կենսագրությունը չէ, դա սիրո գեղեցկության արտահայտությունն է ավելի ջերմ»: Ինչպես նաև Հ.Թումանյանի ստեղծագործություններում ամբողջ Լոռին է նա ներկայացնում և հայ ժողովրդի կյանքը, և նրա կենսագրական տվյալները մտել են մեր գրականության մեջ՝ դառնալով մեր ազգային բնավորության գեղարվեստական պատկերը:

***-Որքանո՞վ եք կարևորում ազգային հատկանիշները պոեզիայում և ընդհանրապես գրականության մեջ:***

-Ընդհանրապես գրականագիտությունը շոշափում է այդ հարցը: Գրողն առաջին հերթին պետք է իր ժողովրդի կենսափորձը, անցած ճանապարհը, բնավորության գծերը, հոգեբանությունը, լեզվի առանձնահատկությունները իմանա՝ առանձնապես կերպարը ստեղծելիս, և գրողի ստեղծած կերպարը պետք է հայ լինի: Օրինակ՝ վերցնենք Հրանտ Մաթևոսյանի արձակը, ամբողջը հայկական կյանքն է, և գրողը պետք է այնպիսի ընդհանրացումներ կատարի կերպարը ստեղծելիս, որ ազգային շրջանակներից դուրս գա դեպի համամարդկային ասպարեզ:

***-Ի՞նչն եք Դուք համարում ամենահիմնականը գրողի համար:***

-Գրողի համար ամենահիմնականը ես համարում եմ սերտ կապը ժողովրդի հետ: Եթե գրողը սերտ կապի մեջ չեղավ ժողովրդի հետ, նա տանուլ է տալու: Եվ պատահական չէ Թումանյանի ասածը, որ ազգային գրականությունը պետք է ստեղծել ժողովրդի ծոցի մեջ: Ամեն օր պիտի քո բարբառը լսես, քո կյանքի ցավին ականատես լինես, մասնակցես հերոսական հաղթարշավին, դա նշանակում է, որ գրողի հաջողության գրավականը ժողովրդի կյանքի հետ ունեցած սերտ կապն է:

***Հարցազրույցը՝ Մարիամ Գրիգորյանի, Լրագրություն 4-րդ կուրս***

# ՆՇՎԵՑ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ



***Ծրագրավորողի միջազգային օրվա կապակցությամբ սեպտեմբերի 13-ին կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ:***

Ինտելեկտուալ պայքարին մասնակցում էին կառավարում 4-րդ, ԿՄ 3-րդ և 4-րդ, ՏՏ 2-րդ և 3-րդ կուրսերի 2-ական թիմերը, որոնք, մասնագիտական գիտելիքներից բացի, ի ցույց են դրել նաև ընդհանուր ինտելեկտուալ պատրաստվածության մակարդակը: Մրցութային փուլերի արդյունքներով առաջին հորիզոնականը զբաղեցրել է «Red Device» (կառավարում, 4-րդ կուրս) թիմը: Մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը պարգևատրվել են պատվոգրերով:

Մրցույթի ժյուրիի կազմում ընդգրկված էին ոչ միայն ամբիոնի երիտասարդ դասախոսներ, այլև` մագիստրանտներ, որոնց ընդգրկվածությունը, ամբիոնի վարիչի խոսքով, միաժամանակ մի քանի խնդիր է լուծում:

«Նման միջոցառումների կազմակերպմամբ նպատակ ունենք առաջին հերթին արժևորելու մեր մասնագիտական օրը, ապա` կապ ապահովել բաժնի տարբեր մասնագիտության ուսանողների միջև, իսկ մագիստրանտների ընդգրկումը կրտսերներին փորձի փոխանակման հնարավորություն է ստեղծում»,- ասել է ԿՄԻ ամբիոնի վարիչ Վազգեն Առստամյանը:

# ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱՆՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ



***Մաթեմատիկայի ամբիոնի նախաձեռնությամբ սեպտեմբերի 25-ին բարձրագույն մաթեմատիկայից կազմակերպված միջբուհական օլիմպիադան նվիրված էր ամբիոնի դասախոս, երջանկահիշատակ Հրանտ Խաչատրյանի ծննդյան 70-ամյակին:***

Միջոցառմանը հրավիրված էին համալսարանի ղեկավարությունը, բնագիտական ֆակուլտետի դասախոսական և ուսանողական կազմը, Հ. Խաչատրյանի ընտանիքի անդամներ:

Բացելով միջոցառումը` ամբիոնի վարիչ Լիանա Աբրահամյանը նշեց, որ օլիմպիադայի կազմակերպումը հարգանքի յուրօրինակ տուրք է իրենց ավագ գործընկերոջ` Հ. Խաչատրյանի հիշատակին:

«Մեծ է Հ. Խաչատրյանի ներդրումը մեր ամբիոնի կայացման և անսահման է նրա նվիրումը համալսարանում գիտության և մանկավարժության զարգացման գործում: Նա իր ողջ գիտելիքներն ու եռանդը ի սպաս է դրել մեր գիտակրթական համակարգի զարգացմանը»,- ասել է Լ. Աբրահամյանը;

Ներկայիս սերնդի պատկերացումներում Հ. Խաչատրյան ազնիվ մտավորականի, ճանաչված գիտնական-մանկավարժի, ակտիվ հասարակական-քաղաքական գործչի կերպարն ամբողջացնելու համար գործընկերները` Ռուդիկ Առաքելյանը, Ռոբերտ Հարությունյանը, Կարինե Մարությանը, Վոլոդյա Միրզոյանը, Գեորգի Սահակյանն ու Վալերի Ավանեսյանն իրենց ելույթներում խոսեցին Հ. Խաչատրյանի մարդկային որակներից` գնահատելով նրա վաստակն ու մարդկային տեսակը:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը, ում Հ. Խաչատրյանի հետ ավելի քան երեք տասնամյակի ընկերությունն էր միավորում, ընդգծում է. «Օրինակելի տեսակ էր, որ հաճախ բացակայում է մեր օրերում»:

Բնագիտական ֆակուլտետի դեկան Վոլոդյա Միրզոյանը, գործընկերոջ մասին հուշեր պատմելուց բացի, շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին` նշելով, որ մարդն ապրում է այնքան ժամանակ, քանի դեռ նրան հիշում են:

Ընտանիքի անունից համալսարանին և ամբիոնին շնորհակալություն հայտնեց Հ. Խաչատրյանի որդիներից Արմեն Խաչատրյանը. «Հայրս չէր աշխատում, նա առաքելություն էր իրականացնում»:

Ելույթներից հետո ուսանողները համապատասխան առաջադրանքներ ստացան` շարունակելով աշխատել:



# ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ



***Առաջին կուրսեցիների երդման արարողությունը մայր բուհի ավանդական միջոցառումներից է: Սեպտեմբերի 18-ին ԱրՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ կայացավ երդման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցում էին ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱՀ ՄԵՀՁ նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, ԿԳՍ փոխնախարար Արմեն Սարգսյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, համալսարանականներ:***

Միջոցառումը մեկնարկեց ԱրՊՀ զոհված ուսանող - ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին ծաղիկներ խոնարհելով, որից հետո երդման տեքստն ընթերցելու պատիվը վերապահվեց բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Տաթևիկ Ավանեսյանին:

«Երդվում ենք վառ պահել նահատակված ուսանողների հիշատակը, հավատարիմ մնալ նրանց վեհ գաղափարներին, պատվով և պատասխանատվությամբ շարունակել նրանց կիսատ թողած գործը, սիրել և սրբությամբ պահպանել հայրենի երկրի զարգացման և բարգավաճման ուղին բռնած մայր բուհը»,-ասվում է ուսանողների երդման խոսքում:

Առաջին կուրսեցիներին շնորհավորելու եկած նախարարներն ու բուհի ռեկտորը, համոզված լինելով, որ վերջիններս նոր շունչ են տալու համալսարանին, պատվով և արժանապատվությամբ են կրելու մայր բուհի ուսանողի կոչումը, հերթական անգամ կոչ արեցին չընկրկել գիտելիքներ ստանալու ճանապարհին և ուսումնառությունից քաղել առավելագույնը:

«Այս սուրբ վայրում երդվել` նշանակում է պարտավորվել ապրել նաև նահատակված ուսանողների կյանքով, սովորել նրանց փոխարեն, շարունակել նրանց պայքարը և տարբեր ոլորտներում ձեր հաջողություններով ամրագրել նրանց կռած հաղթանակները»,- ասել է Ն. Աղաբալյանը` շեշտելով, որ նրանք շրջադարձային փոփոխությունների ոչ միայն ականատեսը, այլև` անմիջական մասնակիցը պիտի լինեն:

ՄԵՀՁ նախարար Լ. Հովհաննիսյանն ընդգծեց, որ այսպիսի միջոցառումներով հիմք է դրվում գիտության, կրթության և այլ ոլորտներում ուսանողների ապագայի կերտման հիմնաքարը. «Մեր ապագան դուք եք, և տա Աստված, որ կիսատ այն գործերը, որ թողել են նախորդ սերունդները, հաջողեք ի կատար ածել»:

Առաջին կուրսեցիների մուտքը մայր բուհ նման միջոցառումներով նշանավորելն ԱրՊՀ ռեկտորը պատահականություն չի համարում, ինչպես և պատահականություն չէ երդումն ինքնին:

«Լիահույս եմ, որ այն երդումը, որ հնչեցրիք այս սուրբ վայրում, կուղեկցի ձեզ ուսումնառության ողջ ընթացքում: Կհիշեք, որ միայն աշխատանքը և կրթությունը կարող են մարդուն գեղեցկացնել և ընդունելի դարձնել հասարակության համար», - ասել է ռեկտորը` երաշխավորելով, որ համալսարանի կոլեկտիվը միշտ աջակից է լինելու, որպեսզի ուսումնառության ընթացքում նրանք ստանան լիարժեք գիտելիքներ և ձևավորվեն իբրև քաղաքացի:

Շնորհավորանքի և բարեմաղթանքի ուղերձներից հետո ԿԳՍ և ՄԵՀՁ նախարարներն ու բուհի ռեկտորը ուսանողական գրքույկներ և տոմսեր են հանձնել ընդունելության արդյունքներով ամենաբարձր միավորներ հավաքած առաջին կուրսեցիներին: Արարողությունը եզրափակվել է խորհրդանշական` «Երդմանը հավատարիմ» խորագրով պար- բեմադրությամբ:

# «ԵՍ ՀԻԱՑԱԾ ԵՄ ԱՐՑԱԽՈՎ ԵՎ ՆՐԱ ԺՈՂՈՎՐԴՈՎ». ՄԱՅՔԼ ԹՈՄԱՍ ՌՈՋԵՐ

***Սեպտեմբերի 4-ին ԱրՊՀ է այցելել Սիդնեյի համալսարանի ասպիրանտ Մայքլ Թոմաս Ռոջերը և հանդես եկել դասախոսությամբ:***



«Ես հիացած եմ Արցախով, նրա ժողովրդի հյուրասիրությամբ, մշակույթով»,-ասել է Մայքլ Թոմաս Ռոջերը, ով բանասիրական ֆակուլտետի օտար լեզուներ և թարգմանչական գործ մասնագիտությունների ուսանողների առջև երկրագիտություն առարկայի շրջանակում հանդես է եկել դասախոսությամբ, որը վերաբերում էր Ավստրալիայի պատմությանը: Մասնագիտությամբ պատմաբան բանախոսը նաև նշել է, որ ուսումնասիրում է Արցախի պատմությունը և հոդվածներ ունի հրատարակած Արցախի մասին: Վերջում նա պատասխանել է ուսանողներին հետաքրքրող հարցերին:

# ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱԳԻՐ ԵՊՀ-Ի ԵՎ ԱրՊՀ-Ի ՄԻՋԵՎ



***Սեպտեմբերի 27-ին Երևանի պետական համալսարանում ԵՊՀ պատմության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:***

Հուշագիրը ստորագրել են ԵՊՀ ռեկտորը, պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը և ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան Արարատ Վարդանյանը` կարևորելով ազգային նպատակների իրականացման ճանապարհին ընդհանուր պատմագիտական միջավայր, դաշտ ձևավորելու, Հայաստանի պատմությունը, մշակույթն ու արվեստը պատշաճ մակարդակով աշխարհին ներկայացնելու, ինչպես նաև սերունդների հայրենասիրական դաստիարակության գործում որակյալ պատմաբան մասնագետների պատրաստման, փորձի փոխանակման գործում սերտ համագործակցության անհրաժեշտությունը և հաշվի առնելով հայոց պատմության աղավաղման, մշակութային արժեքների յուրացման փորձերին համակարգված կերպով հակազդելու գործում երկու բուհերի մասնագետների ջանքերի համատեղման կարևորությունը:

Համագործակցության շրջանակում ԵՊՀ պատմության ֆակուլտետն ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական, առարկայական ծրագրերի վերանայման և մշակման ուղղությամբ կտրամադրի խորհրդատվություն, ինչպես նաև դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ուսումնամեթոդական նյութեր, անհրաժեշտության դեպքում էլ կաջակցի դրանց պատրաստմանը: Հուշագրի շնորհիվ հնարավորություն կընձեռվի ԱրՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին ուսումնառության մի մասն անցկացնել ԵՊՀ ֆակուլտետում:

Հուշագիրը նպաստելու է, որ կողմերը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում կազմակերպեն նաև մասնագիտական քննարկումներ, խորհրդակցություններ, գիտաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ:

# ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

***Սեպտեմբերի 3-ին կայացել է ԱրՊՀ գիտական խորհրդի նիստ, որի օրակարգային հարցերն էին կանոնակարգային մի շարք փոփոխություններ, թափուր պաշտոնների ընտրություններ, հաշվետվություններ:***

Նիստի առաջին երեք հարցերը, որոնք կանոնակարգային փոփոխություններ էին ենթադրում, ներկայացրեց ռեկտորի պաշտոնակատար Մ. Մինասյանը: Գիտխորհուրդը լսել է և հաստատել ներքին կարգապահական կանոններում, բակալավրի կրթական ծրագրով կրթական պայմանագրի նմուշում և վարձավճարների գանձման կանոնակարգում առաջարկվող փոփոխությունները:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացրել մի քանի մասնագիտությունների առկա ուսուցման համակարգի ուսումնական տարվա պլաններում փոփոխություններ կատարելու մասին հարցը:

ՈւՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը զեկուցել է 2018թ. ամառային միջոցառումներին ԱրՊՀ ուսանողների մասնակցության մասին: Գիտխորհրդում հաստատվել է կ.գ.դ. Համիկ Գալստյանի կողմից ներկայացված գիտական ծրագիր: Պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար կազմակերպվել է փակ-գաղտնի քվեարկություն, որի արդյունքում դոցենտի կոչում է շնորհվել ԱրՊՀ հինգ գիտաշխատողի:

* * *

***Սեպտեմբերի 19-ին կայացած ԱրՊՀ գիտական խորհրդի նիստում հաստատվել են մի շարք կանոնակարգեր, կազմակերպվել ՈւԳԸ նախագահի և պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման քվեարկություն:***

Օրակարգի հաստատումից հետո ԱրՊՀ ռեկտորի պաշտոնակատար Մանուշ Մինասյանը գիտխորհրդին ներկայացրեց կառուցվածքային որոշ փոփոխությունների արդյունքում վերակազմավորված բաժինների կանոնադրությունները հաստատելու անհրաժեշտությունը` նշելով, որ վերակազմավորումները պայմանավորված են հավատարմագրման գործընթացի պահանջների իրացմամբ: Հաստատվել են ՈւՀՏԱ և կարիերայի, հանրային կապերի և լրատվության բաժինների կանոնակարգերը:

Գիտխորհուրդը հաստատել է նաև գիտխորհրդի և ռեկտորատի կանոնակարգերում առաջարկված փոփոխություններն ու ՈւԳԸ նախագահի թեկնածությունը, տպագրության երաշխավորել ուսումնական ձեռնարկ, փակ-գաղտնի քվեարկությամբ կատարել մեկ դոցենտի և երկու ամբիոնների վարիչների ընտրություն:



# ԱրՊՀ-ՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԱՆԴՐԵՅ ՆՈՒՅԿԻՆԻ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ԿԱԲԻՆԵՏ



***Սեպտեմբերի 17-ին ԱրՊՀ-ում բացվեց ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիրներից, գրող, հրապարակախոս Անդրեյ Նույկինի անունը կրող կաբինետ: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին ԱՀ Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը,ԱՀ ԱԳ նախարար Մասիս Մայիլյանը, ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱՀ ՄԵՀՁ նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, ՄԻՊ Ռուբեն Մելիքյանը, Ա. Նույկինի հարազատներ, ԱրՊՀ դասախոսներ, ուսանողներ:***

Ողջունելով ներկաներին` ԱրՊՀ ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Նունե Առաքելյանը ներկայացրեց Ա. Նույկինի գրական ժառանգությունն ու ծավալած հասարակական-քաղաքական գործունեությունը. «Ա. Նույկինն Արցախի համար մի այնպիսի ժամանակաշրջանում է նպաստավոր գործունեություն ծավալել, երբ պաշտոնական դեմքերն ու ԶԼՄ-ները ղարաբաղցիներին համարում էին տեռորիստներ և ահաբեկիչներ: Նա արդարամիտ մտավորական էր»:

«Ղարաբաղ` իմ ցավ» գրքում Անդրեյ Նույկինը պատմել է, թե ինչպես մի խումբ մոսկվաբնակ մտավորականներ, առաջնորդվելով արդարության և պարտքի զգացումով, 1991-ի փետրվարին, Մոսկվա-Երևան-Ստեփանակերտ չվերթից հետո, կյանքում առաջին անգամ ականատես եղան ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի և ադրբեջանական ՕՄՈՆ-ի պատժիչ գործողություններին: Ղարաբաղցիների հետ միասին նրանք ենթարկվեցին նվաստացումների և հալածանքների, որ կատարվում էին հենց այն վայրում, որտեղ վայրէջք էր կատարել ինքնաթիռը, և ստիպված էին հեռանալ Ղարաբաղից` մի քայլ անգամ չանելով Ստեփանակերտի օդանավակայանից: Մոսկվա վերադառնալուն պես կոմիտեի անդամները` գրողներ Նույկինը, Գայդարը, Օսկոցկին, Չերնիչենկոն, Գ.Նույկինան, զայրացած վերապրածից, ստեղծեցին ռուս մտավորականների «Ղարաբաղ» կոմիտեն («Ճիչ»): Ա. Նույկինը նշանակալի ավանդ է ունեցել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի օբյեկտիվ ու արդարացի լուսաբանման և Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների կոպիտ խախտման փաստերն աշխարհին ներկայացնելու գործում:

Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը ողջունել է ներկաներին և արժևորել Անդրեյ Նույկինի հայանպաստ գործունեությունը` նշելով, որ Արցախյան շարժման օրերին «Ճիչ» կոմիտեն խորհրդանշեց հայ ժողովրդի հոգու ճիչը: Արցախը ոչ միայն հայերի հայրենիքն է, այլ նաև այն մարդկանց, որոնք իրենց կյանքի գնով նպաստեցին արդարության վերականգնմանը: «Խորհրդանշական է, երբ Արցախյան շարժման 30-ամյակի առթիվ մենք վերադառնում ենք շարժման ակունքներին, հիշում և հարգում ենք այն մարդկանց, ովքեր Արցախը բացահայտել և ներկայացրել են աշխարհին»:

ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանն իր խոսքում նշեց, որ Անդրեյ Նույկինին Արցախում երախտագիտությամբ են հիշում. «Նա այն մարդկանցից է, ում մասին խոսելիս ասում են` իր ժամանակի հերոսը: Նա չկարողացավ անտարբեր մնալ ուրիշի ցավին»:

Անդրեյ Նույկինի որդին` Պավել Նույկինը, ողջունելով ներկաներին, շնորհակալություն է հայտնել նախաձեռնության համար` խոսելով հայ և ռուս ժողովուրդների բարեկամության, պատմական ճակատագրի նմանության մասին: Նրա խոսքով` երկու ժողովուրդներն էլ տարածքային կորուստներ են ունեցել պատմության ընթացքում, որոնք պետք է վերադարձվեն: Նա ներկայացրել է նաև հոր` Անդրեյ Նույկինի գրական, հրապարակախոսական, հասարակական-քաղաքական գործունեությունը:

# ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ԱրՊՀ-ՈՒՄ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ ՄԻՋՈՑԱՌՄԱՄԲ



***Սեպտեմբերի 21-ը տոն է հայ ժողովրդի համար, իսկ ՄԱԿ-ի օրացույցում այն նշված է նաև որպես «Խաղաղության միջազգային օր»: ՀՀ անկախության տոնի և խաղաղության միջազգային օրվա առթիվ բնագիտական ֆակուլտետում օրը նշանավորվեց միջոցառմամբ:***

Ֆակուլտետի դեկան Վ. Միրզոյանը, շնորհավորելով բոլորին տոնի առթիվ, առաջին կուրսեցիներին հանձնեց ուսանողական տոմսեր և ստուգման գրքույկներ` մաղթելով բարձր առաջադիմություն, հետաքրքիր և արդյունավետ ուսանողական կյանք:

Միջոցառումը շարունակվեց ինտելեկտուալ խաղով, որը կազմակերպվել է աշխարհագրության, կենսաբանության և մաթեմատիկայի 1-ին կուրսերի կուրսղեկ Ռ.Թովմասյանի նախաձեռնությամբ: Երեք խաղափուլից բաղկացած թեժ պայքարում հաղթեց «Բարձունք» (ՏՏ-1) թիմը, որը պարգևատրվեց պատվոգրով և հուշանվերներով: Միջոցառումը ոչ ֆորմալ ձևաչափով ուսանողներին գիտելիքներ տալուց, հայրենագիտական յուրահատուկ դաս լինելուց բացի, նպատակ ուներ նաև առաջին կուրսեցիներին ֆակուլտետի կոլեկտիվին ինտեգրելու: Ուսանողները գոհունակություն հայտնեցին` ընդգծելով իրենց պատրաստակամությունը` նման միջոցառումներին ոչ միայն մասնակցելու, այլև ինքնուրույն կազմակերպելու գործում` կարևորելով դրանց նշանակությունը:

# 2018 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄԱՌԸ ԱՌԱՆՁՆԱՑԵԼ Է ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ

***Վերջին տարիներին Արցախի մայր բուհում ուսանողների հետ տարվող աշխատանքները իրականացվում են ուսանողամետ և ուսանողակենտրոն սկզբունքով՝ կարևորելով նաև ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, միջբուհական, հանրապետական ու միջազգային գիտաժողովներն ու ֆորումները, ամառային ճամբարներն ու դպրոցները, վրանային բանակումները: 2018 թվականի ուսանողական ամառը հագեցած էր վերոնշյալ ծրագրերով, որի մասին էլ զրուցել ենք ԱրՊՀ ՈւՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանի հետ:***



***- Պարո՛ն Յարամիշյան, տևական ժամանակ է, ինչ համակարգում եք ուսանողների հետ տարվող աշխատանքների ոլորտը և հաճախ եք կրկնում, թե ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերին և ավարտվում հունիսին, ինչը, սակայն, չի նշանակում, թե դրան հաջորդող ամիսներին ուսանողական կյանքը կանգ է առնում: Այս ամառը, մեր և Ձեր համոզմամբ, տարբերվում էր նախորդներից: Ինչո՞վ էր այն առանձնանում:***

- Այո, բազմիցս առիթներ եմ ունեցել համոզելու, որ ուսանողական կյանքը ուսումնական տարվա հետ չի ավարտվում: Ընդհակառակը, ամառային ամիսներին այն նոր երանգներ է ստանում: Այս տարիների մեր աշխատանքը թույլ է տալիս բավականության զգացումով խոսելու ուսանողների հետ տարվող աշխատանքների շոշափելի արդյունքների և այդ ուղղությամբ գրանցած ձեռքբերումների մասին: Այս ամառը գործընկեր բուհերի հետ ակտիվ համագործակցության շնորհիվ առանձնացել է հատկապես բովանդակային առումով:

Ինչպես գիտեք, նախորդ տարվանից մեզ հնարավորություն է ընձեռվել օգտվելու Ֆիլիպպ Էգգերի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող միջազգային դրամաշնորհային ծրագրից, որի շնորհիվ իրականություն դարձան միջազգային ամառային ճամբարը Պատարայում, ուսանողների գործուղումներն արտերկրի և Հայաստանի բուհեր, մասնակցությունը տարբեր գիտաժողովների,փորձուսուցումների, ամառային դպրոցների, մասնագիտական դասընթացների, ֆորումների: Սրանք քայլեր են, որոնք նպաստել են ԱրՊՀ միջազգային ճանաչմանը, համահայկական կրթական դաշտին ինտեգրմանը, մասնագիտական պատրաստման որակի բարելավմանը, անհրաժեշտ մասնագիտական ու մարդկային որակների ձևավորմանը:

***- Կխնդրեի պատմել ԱրՊՀ-ի իրականացրած առավել նշանակալի ծրագրերի և միջոցառումների մասին:***

- Հնարավորինս հակիրճ փորձեմ ներկայացնել միջազգային մակարդակի միջոցառումները: Այսպես, հուլիսի 5-ից 21-ը կազմակերպված միջազգային ամառային ճամբարին երեք հերթով մասնակցել են շուրջ 80 ուսանողներ ԱրՊՀ-ից, ԵՊՀ-ից, այդ թվում՝ Իջևանի մասնաճյուղից, ՀՊՄՀ-ից, ՀՊՏՀ-ից, ՀԱՀ-ից, ՀՌ(Ս)Հ-ից, ԵՊԲՀ-ից, ԱՄՆ Քալիֆոռնիայի համալսարանից, Հունգարիայի Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարանից և այլ բուհերից՝ կազմակերպելով հանդիպումներ բարձրաստիճան պաշտոնյաների, համալսարանականների հետ: Հունիսի 25-ից հուլիսի 21-ը իրավագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Լուսինե Կարապետյանը մասնակցել է Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի իրավաբանական դպրոցի դասընթացներին: Իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 5 ուսանողներ հուլիսի 25-28-ը Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում մասնակցել են միջազգային դատախաղի՝ ցուցաբերելով լավ արդյունքներ: Հուլիսի 2-6-ը իրավագիտության 2-րդ կուրսի ուսանողներ Մ.Գրիգորյանը և Մ.Գաբրիելյանը մասնակցել են «Ուրալի պետական համալսարանի», «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 70-րդ տարեդարձը. արդի մարտահրավերներ և ժառանգություն» խորագրով 6-րդ ամառային դպրոցին:

***- Անդրադառնանք անելիքներին: Ինչպիսի՞ ծրագրեր են նախատեսվում առաջիկայում:***

- Նախ նշեմ, որ ուսանողների հետ տարվող աշխատանքների տրամաբանությունը չի փոխվելու, քանի որ, ինչպես վկայում է փորձը, ուսանողամետ և ուսանողակենտրոն քաղաքականությունը տալիս է ցանկալի արդյունքներ: Իսկ ինչ վերաբերում է անելիքներին, ասեմ, որ հընթացս բարելավվում են ոլորտի աշխատանքների որակն ու մակարդակը, մասնավորապես առանձին ստորաբաժանման կարգավիճակ է ստացել ՈւՀՏԱ և կարիերայի բաժինը, որի գործառութային պարտականություններին է վերագրվում աշխատանքը նաև շրջանավարտների և խոշոր գործատուների հետ:

***- Անցած ուստարում ԱրՊՀ-ում միջոցառումների պակաս չէր զգացվում: Արդյո՞ք համալսարանը հաջողելու է շենքային ներկայիս պայմաններում ապահովել միջոցառումների նույնպիսի քանակ և որակ:***

- Ընթացիկ ուսումնական տարվա պլանավորման հիմքում ընկած է գործողությունների օպտիմալացման մեխանիզմը, որը վերաբերում է նաև ուսանողական միջոցառումներին. ավանդական միջոցառումների ընթացքը չի խմբագրվելու: Մասամբ փոխվելու է ներգնա և արտագնա միջոցառումներ հարաբերակցությունը, այսինքն, կապված շենքային պայմանների սղության հետ, նախապատվությունը տալու ենք արտահամալսարանական միջոցառումներին:



# ՄԵԴԻԱՓՈՐՁԱԳԵՏ ՍԱՄՎԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

***ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության հրավերով Արցախում է մեդիափորձագետ Սամվել Մարտիրոսյանը: Սեպտեմբերի 19-ին Ս.Մարտիրոսյանը հանդիպում է ունեցել ԱրՊՀ մի խումբ ուսանողների հետ, հանդես եկել տեղեկատվական անվտանգության ոլորտի վերաբերյալ դասախոսությամբ և պատասխանել ներկաներին հետաքրքրող հարցերին:***



Հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները՝ բանախոսը ներկայացրեց առկա խնդիրները՝ կարևորելով միդիագրագիտության անհրաժեշտությունը՝ տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու համար:

Խոսելով հայ-ադրբեջանական քարոզչական պայքարից՝ բանախոսը նշում է, որ փաստացի հակաքարոզչություն ադրբեջանական ուղղությամբ չկա, որովհետև հայաստանյան հասարակությունն ամբողջությամբ ուղղված է դեպի ներքաղաքական խնդիրները, և ադրբեջանցիներն ազատ կարողանում են իրենց քարոզչական թեզերը առաջ քաշել և տանել դեպի դուրս, ազդել այլ երկրների հասարակությունների վրա: Սակայն, մեդիափորձագետի խոսքով, իրավիճակը փրկում է այն հանգամանքը, որ Ադրբեջանի միջազգային վարկանիշը շատ ցածր է: Մյուս կողմից, փորձագետի հավաստմամբ, ադրբեջանական կողմը լավ չի հասկանում,թե ինչպես է զարգանում Հայաստանում իրավիճակը, որպեսզի կարողանա ինչ-որ ձևով ներազդել, դրա համար իրենց կողմից էլ բավականին անորոշ ռեակցիաներ են:

«Կարելի է ասել, որ այս քարոզչական հակամարտությունը հիմա բավականին սառեցված վիճակում է, հիմնականում մեր կողմից», - ընդգծում է Ս. Մարտիրոսյանը:

Մեդիափորձագետը խոսեց նաև համացանցային ֆեյք նորությունների և դրանց տարածման հնարավոր ազդեցությունների, հայկական մեդիադաշտում առկա խնդիրների մասին՝ դրանց լուծման համար կարևորելով կոմպլեքս մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը, որտեղ, նրա խոսքով, մեծ անելիքներ կան լրագրողներ պատրաստելու ոլորտում: Ս. Մարտիրոսյանը նաև պատասխանել է ուսանողների հարցերին:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱԽԱՐՈՎԻ ՀԵՏ



***Արցախի Հանրապետության հռչակման հերթական տարեդարձի կապակցությամբ այս օրերին Արցախում է «Սևծովյան-կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտ»-ի տնօրեն Վլադիմիր Զախարովը, ով սեպտեմբերի 10-ին այցելել է ԱրՊՀ և հանդիպում ունեցել բուհի ուսանողների ու դասախոսների հետ:***

Վ. Զախարովը առաջին անգամ չէ Արցախում, ավելին՝ Արցախի ժողովրդի լավագույն բարեկամներից է, հետազոտում է հայ-ռուսական գրական կապերն ու զուգահեռները: Համանուն թեմայով դասախոսությամբ էլ հանդես է եկել բուհի ռուսաց լեզվի, գրականության ու լրագրության բաժինների ուսանողների և դասախոսների համար: Հանդիպման ընթացքում բանախոսը ներկայացրել է հայ ժողովրդի հետ Լերմոնտովի ունեցած առնչությունները՝ շեշտադրելով հատկապես գրողի այցելությունը Շուշի: Նա անդրադարձել է նաև տեղեկատվական դաշտում ադրբեջանական կեղծարարություններին, այդ թվում նաև՝ նշյալ թեմայի հետ կապված:

Համալսարան կատարած այցելության ընթացքում Վ. Զախարովը, ով նաև համանախագահում է Ռուսաստանի Լերմոնտովյան կոմիտեն, կոմիտեի կողմից «Կայսին Կուլիև» մեդալով պարգևատրել է ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանին, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Նունե Առաքելյանին, ռուս-իրանական բարեկամության միության «Մավլանա Ռումի» հուշամեդալով՝ բանասիրական ֆակուլտետի դեկան Լուսինե Մարգարյանին:

# ԼԱՅՊՑԻԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱրՊՀ

***Ճանաչողական այցով Արցախի Հանրապետությունում է գտնվում Լայպցիգի համալսարանի պատվիրակությունը՝ համալսարանի Լայբնիցի անվան Արևելյան Եվրոպայի պատմության և մշակույթի ինստիտուտի փոխտնօրեն Շտեֆան Թրյոբսթի գլխավորությամբ: Սեպտեմբերի 13-ին պատվիրակությունը, որի կազմում են Լայպցիգի համալսարանի ասպիրանտներ Գերմանիայից, Կոլումբիայից, Հունաստանից, Լեհաստանից, Հունգարիայից, Հայաստանից,հյուրընկալվել էր ԱրՊՀ-ում, հանդիպել դասախոսների և ուսանողների հետ:***



ԱրՊՀ ռեկտորի պաշտոնակատար Մանուշ Մինասյանը շնորհակալություն է հայտնել Արցախ կատարած այցելության համար՝ նկատելով, որ նման այցելությունները կառուցողական քննարկումների լավագույն հնարավորություններից են: Ռեկտորը օտարերկրյա ուսանողներին ներկայացրել է մայր բուհի կազմավորման և զարգացման ընթացքը, համալսարանի ներկայիս կառուցվածքը, մասնագիտություններն ու կրթական քաղաքականությունը:

Դառնալով բուհի կենսագրությանը՝ Մ. Մինասյանն իր խոսքում նշել է, որ գուցե զարմանալի թվա կրթության և գիտության նկատմամբ հակում ունեցող ժողովրդի մայր բուհի՝ ընդամենը կեսդարյա լինելիությունը, սակայն հանգամանքը պետք է պայմանավորել Ղարաբաղի՝ Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմում լինելու փաստով. «Սակայն, - նշում է Մ.Մինասյանը, - 90-ականների ազգային-ազատագրական պայքարի արդյունքում մենք ունենք մեր ինքնությանն ու էությանը համապատասխան երկիր և կրթական համակարգ»:

Բուհի ղեկավարը ձեռքբերումներին զուգահեռ շեշտել է նաև կրթական խնդիրները՝ նկատի ունենալով բուհի՝ եվրոպական կրթադաշտին ինտեգրվելու ձգտումներն ու երկրի քաղաքական կարգավիճակը:

«Ի հեճուկս Ադրբեջանի հակահայկական քարոզչության՝ մենք հաջողել ենք առաջընթաց ապահովել մի շարք ուղղություններով, մասնավորապես՝ համալսարանը համագործակցային 35-ից ավելի պայմանագրեր ունի արտասահմանյան գիտակրթական հաստատությունների հետ»,- ասել է ռեկտորը՝ հույս հայտնելով, որ նման խնդիրները կդառնան պատվիրակության անդամների գործունեության առանցքային հարցերից:

Ջերմ ընդունելության համար շնորհակալություն հայտնելով համալսարանականներին՝ պատվիրակության ղեկավար Շ. Թրյոբսթը ներկայացրել է խմբի անդամների գործունեությունն ու հետաքրքրությունները: Իսկ պատվիրակության անդամներին հետաքրքրում էր նաև համալսարանի ներքին և արտաքին կյանքը, ուսանողների ակնկալիքներն ու նպատակները: ԱրՊՀ ուսանողները ևս մի շարք հարցեր են ուղղել հյուրերին: Հարցին, թե արդյոք Արցախ այցելելու համար Ադրբեջանի «սև ցուցակում» հայտնվելու հավանականությունը չի մտահոգում հյուրերին, Շ. Թրյոբսթի պատասխանը միանշանակ է ու կարճ. «Ոչ»՝ հավելելով, սակայն, որ ավելի մտահոգիչ է Ադրբեջանի ծավալած քարոզչությունը, որին ուղղվում են մեծ միջոցներ: Հանդիպման վերջում Մ. Մինասյանն Արցախի մասին անգլալեզու գրականություն է նվիրել հյուրերին:





# ԴԻՎԱՆԱԳԵՏ ՇՈՆ ՌԻՈՐԴԱՆԸ ԴԱՍԸՆԹԱՑ Է ՎԱՐԵԼ ՄԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ

***Այս օրերին աշխատանքային հերթական այցով Արցախում է Քլինգենդալ համալսարանի պրոֆեսոր, Իսպանիայի միջազգային քոլեջի դասախոս, անկախ փորձագետ, միջազգային դիվանագիտական շրջանակներում ճանաչված մասնագետ Շոն Ռիորդանը, ով սեպտեմբերի 24-ից մինչև 28-ը դասընթաց է վարել ԱրՊՀ-ում:***



Դիվանագիտական ինստիտուտներին և ոլորտի ներկայացուցիչներին վերապատրաստելու, դիվանագիտության ժամանակակից մեթոդներին ծանոթացնելու նպատակով կազմակերպված «Պարադիվանագիտական ռազմավարությունը Արցախում» թեմայով դասընթացին մասնակցում են ԱրՊՀ ուսանողներ և ԱՀ ԱԳ նախարարության աշխատակիցներ:

Դասընթացավարն աշխատանքները կազմակերպել է առանձին ձևավորված աշխատանքային խմբերում՝ այդպիսով նպատակ ունենալով առաջադրված դիվանագիտական խնդիրների վերաբերյալ լսելու տարբեր կարծիքներ՝ արդյունքում առաջացնելով բանավիճային իրավիճակ:

Շ. Ռիորդանը նկատում է, որ Արցախը ժամանակի հետ նոր մարտահրավերների առաջ է կանգնում, որին դիմակայելու համար առավելապես ինովացիոն տեխնոլոգիաների վրա հիմնված ռազմավարություն է պետք մշակել:

«Պարադիվանագիտությունը՝ ոչ պաշտոնական դիվանագիտությունը, չճանաչված երկրների քաղաքականության գործիքակազմի լավագույն դրսևորումն է, ուստի այս անգամ շեշտադրումը պարադիվանագիտությունն է այն պատճառով, որ համապատասխան կառույցը ներկայացնող մասնագետներն ու ուսանողները պետք է տիրապետեն սեփական երկրի շահերի խթանման տեխնիկային»,- ասել է բանախոսը:

Նշենք, որ դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակիցներին տրամադրվել են հավաստագրեր:

# ՆՊԱՏԱԿԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՆ Է



***CERGE-EI (Center for Economic Research and Graduate Education - Economics Institute) ծրագրի ներկայացուցիչ, մասնագիտությամբ տնտեսագետ Դավիթ Ադունցը ԱրՊՀ-ում նշված ծրագրի շրջանակում մեկ կիսամյակ կվարի էկոնոմետրիկայի հիմունքներ դասընթացը:***

Դասընթացի մեկնարկը տրվել է սեպտեմբերի 5-ին, որին ներկա էին տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներ: Մեզ հետ ունեցած զրույցում Դավիթ Ադունցը նշել է, որ ուսանողները մեծ հետաքրքրությամբ են լսում դասախոսությունը: «Շատ ընդունակ ուսանողներ են, սովորելու հանդեպ սեր ունեն, որը ամենակարևորն է: Այս դասընթացի նպատակը Արցախի պետական համալսարանում միջազգային կարգի դասավանդում իրականացնելն է, գրականության և փորձի փոխանակումը ոչ միայն ուսանողների, այլ նաև դասախոսների հետ: Հուսով եմ, որ կկարողանանք համագործակցել, գիտական համատեղ հետազոտություններ, աշխատանքներ կատարել: Այս դասընթացը մեր համագործակցության առաջին քայլն է, և այն շարունակական է լինելու»,-ասել է նա:

*Հիշեցնենք, որ հունիսի 20-ին ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանն ընդունել էր CERGE-EI հիմնադրամի նախագահ, տնտեսագիտության պրոֆեսոր Ռանդալ Ֆայլերին: Հանդիպմանը քննարկվել էին հիմնադրամի և ԱրՊՀ համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր, այդ թվում նաև՝ ծրագրի ներկայացուցիչների կողմից ԱրՊՀ-ում դասընթացներ վարելու հարցը: CERGE-EI հիմնադրամը կոչված է զարգացնելու տնտեսագիտությունը հետսովետական երկրներում:*